

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ

ԴԱՍԸՆԹԱՑ 3

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
/քննության հարցեր/

Դեկտեմբեր 2022թ.

Բաժին Ա

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի համար անհրաժեշտ է նշել միայն մեկ պատասխան: Ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. Ստորև թվարկվածներից ո՞րը քաղաքացիական օրենսդրության սկզբունք չէ.

ա/ պայմանագրի ազատությունը,

բ/ սեփականության անձեռնմխելիությունը,

գ/ կամքի ինքնավարությունը և գույքային ինքնուրույնությունը,

դ/ տնտեսվարությունը:

2. Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

ա/ գույք օգտագործելուն, ապրանքներ վաճառելուն, աշխատանքներ կատարելուն կամ ծառայություններ մատուցելուն ուղղված անձի ինքնուրույն գործունեությունը, որի հիմնական նպատակը եկամուտ ստանալն է,

բ/ առևտրային կազմակերպություն ստեղծելուն ուղղված անձի ինքնուրույն բնույթ ունեցող գործունեությունը, որն իրականացվում է գույք օգտագործելով, ապրանքներ վաճառելով, աշխատանքներ կատարելով կամ ծառայություններ մատուցելով և հետապնդում է նաև շահույթ ստանալու նպատակ,

գ/ գույք օգտագործելուն, ապրանքներ վաճառելուն, աշխատանքներ կատարելուն կամ ծառայություններ մատուցելուն ուղղված անձի ինքնուրույն բնույթ ունեցող գործունեությունը, որն իրականացվում է իր ռիսկով և հետապնդում է նաև շահույթ ստանալու նպատակ,

դ/ գույք օգտագործելուն, ապրանքներ վաճառելուն, աշխատանքներ կատարելուն կամ ծառայություններ մատուցելուն ուղղված անձի ինքնուրույն և իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը շահույթ ստանալն է:

3. Վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) մասնակից ավանդատուները (կոմանդիտիստները)

ա/ լիակատար ընկերների հետ միասին իրենց ներդրած ավանդների գումարների սահմաններում կրում են ընկերակցության գործունեության հետ կապված վնասների ռիսկը և չեն մասնակցում ընկերակցության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը,

բ/ կրում են ինքնուրույն գույքային պատասխանատվություն ընկերակցության գործունեության ռիսկերով պայմանավորված և մասնակցում են ընկերակցության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը,

գ/ իրավունք ունեն մասնակցել վստահության վրա հիմնված ընկերակցության կառավարմանը և գործերի վարմանը, առանց լիազորագրի հանդես գալ նրա անունից,

դ/ իրավունք չունեն մասնակցել վստահության վրա հիմնված ընկերակցության կառավարմանը և գործերի վարմանը, առանց լիազորագրի հանդես գալ նրա անունից, սակայն կարող են վիճարկել ընկերակցության կառավարման և գործերի վարման հետ կապված լիակատար ընկերների գործողությունները:

4. Հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը, որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի ինչպի՞սի պատասխանատվություն է կրում դուստր ընկերության հետ.

ա/ սուբսիդիար պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար,

բ/ պատասխանատվություն չի կրում դուստր ընկերության որևէ պարտավորության համար,

գ/ համապարտ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության կնքած բոլոր գործարքների կատարման համար,

դ/ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար:

5. Ստորև թվարկվածներից ո՞րն արժեթուղթ չէ.

ա/ բաժնետոմսը,

բ/ բաժնեմասը,

գ/ չեկը,

դ/ մուրհակը:

6. Ներքոհիշյալ գործարքներից որո՞նք են համարվում բաժնետիրական ընկերության կողմից կնքվող խոշոր գործարքներ

ա/ մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակիորեն կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման և օտարման հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 75 և ավելի տոկոսը,

բ/ մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Ընկերության հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի (բացառությամբ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսերի) տեղաբաշխումը, որը կազմում է Ընկերության կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 75 և ավելի տոկոսը,

գ/ մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը,

դ/ մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Ընկերության միայն հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեղաբաշխումը, որը կազմում է Ընկերության կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 30 և ավելի տոկոսը:

7. Սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող տարրերից մեկը գույքն իր հայեցողությամբ տիրապետելու սեփականատիրոջ իրավագործությունն է, որն իրենից ներկայացնում է՝

ա/ գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորություն,

բ/ գույքը փաստացի տիրապետելու, այն իր մոտ պահելու իրավաբանորեն ապահովված հնարավորություն, որը չի առնչվում այդ գույքն օգտագործելուն,

գ/ գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորություն,

դ/ գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորություն, որը բացառապես առնչվում է այդ գույքն օգտագործելուն:

8. Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը՝

ա/ չի պահպանում իր ուժը,

բ/ փոխանցվում է նոր սեփականատիրոջը,

գ/ պահպանում է իր ուժը,

դ/ դադարում է:

9. Պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ այն անպատշաճ կատարելու դեպքում պայմանագրում տուժանքներ նախատեսելիս պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել՝

ա/ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը,

բ/ սկզբնական պարտքի գումարի քառապատիկը,

գ/ տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարի կեսը,

դ/ տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

10. Բենեֆիցիարի (պարտատիրոջ) հանդեպ երաշխիք տված անձի (բանկի, այլ վարկային հաստատության կամ ապահովագրական կազմակերպության)՝ երաշխիքով նախատեսված պարտավորությունը՝

ա/ ինքնուրույն է և անկախ է հիմնական պարտավորությունից, որի կատարման ապահովման համար այն տրվել է, եթե նույնիսկ երաշխիքում վկայակոչվում է այդ պարտավորությունը,

բ/ ինքնուրույն և անկախ չէ հիմնական պարտավորությունից, որի կատարման ապահովման համար այն տրվել է,

գ/ ինքնուրույն և անկախ է հիմնական պարտավորությունից միայն այն դեպքում, երբ երաշխիքում չի վկայակոչվում հիմնական պարտավորությունը,

դ/ կախված է բացառապես հիմնական պարտավորությունից և կարող է հետ կանչվել երաշխիք տված անձի կողմից:

11. **Եթե վաճառողն ապրանքի թերությունների մասին նախապայման չի սահմանում, ապա գնորդը, ում հանձնված է անպատշաճ որակի ապրանքը, իրավունք ունի վաճառողից, իր ընտրությամբ, պահանջել՝**

ա/ համաչափ պակասեցնելու ապրանքի գինը կամ ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները կամ հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կրած ծախսերը,

բ/ համաչափ պակասեցնելու ապրանքի գինը կամ լուծել կնքված առուվաճառքի պայմանագիրը,

գ/ համաչափ պակասեցնելու ապրանքի գինը կամ ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները կամ լուծել կնքված առուվաճառքի պայմանագիրը,

դ/ լուծել առուվաճառքի պայմանագիրը կամ իրեն հանձնել իր պահանջած որակի ապրանք նույնիսկ եթե չկան ապրանքի որակին առաջադրվող պահանջների էական խախտումներ:

12. **Նշե՛լ լիարժեք պատասխանը: Ապրանքների մանրածախ առուվաճառքի դեպքում պատշաճ որակի ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից 14 օրվա ընթացքում վաճառողին վերադարձնելու կամ այն փոխարինելու գնորդի պահանջը ենթակա է բավարարման, եթե՝**

ա/ ապրանքն օգտագործվել է, սակայն պահպանված են դրա սպառողական հատկանիշները, և առկա են ապրանքը հենց այդ վաճառողից ձեռք բերելու մասին ապացույցներ,

բ/ ապրանքն օգտագործվել է, իսկ դրա սպառողական հատկանիշները հիմնականում պահպանվել են, և առկա են ապրանքը հենց այդ վաճառողից ձեռք բերելու մասին ապացույցներ,

գ/ ապրանքը չի օգտագործվել և առկա են ապրանքը հենց այդ վաճառողից ձեռք բերելու մասին ապացույցներ,

դ/ ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա սպառողական հատկանիշները, և առկա են ապրանքը հենց այդ վաճառողից ձեռք բերելու մասին ապացույցներ:

13. **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը պետք է նախատեսի վարձավճարի չափ: Այն դեպքում, երբ շենքի կամ շինության վարձակալության պայմանագրում բացակայում է վարձավճարի չափի մասին պայմանը, ապա՝**

ա/ շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը համարվում է առոչինչ,

բ/ շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը համարվում է կնքված և կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ գնի որոշման կանոնները,

գ/ շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը համարվում է չկնքված, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ գնի որոշման կանոնները ենթակա չեն կիրառման,

դ/ շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը համարվում է կնքված, սակայն կարող է անվավեր ճանաչվել կողմերից ցանկացածի պահանջով:

14. Կապալառուն՝ շինարարական կապալի պայմանագրով աշխատանքներ իրականացնելիս՝

ա/ պարտավոր է օգտագործել պատվիրատուի տրամադրած նյութերը և սարքավորումները կամ կատարել նրա ցուցումները, եթե անգամ դրանք կարող են հանգեցնել կողմերի համար պարտադիր շրջակա միջավայրի պահպանության ու շինարարական աշխատանքների անվտանգության պահանջների խախտման, քանի որ պատվիրատուն է պատասխանատվություն կրում այդ պահանջները չկատարելու համար,

բ/ իրավունք չունի օգտագործել պատվիրատուի տրամադրած նյութերը և սարքավորումները կամ կատարել նրա ցուցումները, եթե դրանք կարող են հանգեցնել կողմերի համար պարտադիր շրջակա միջավայրի պահպանության ու շինարարական աշխատանքների անվտանգության պահանջների խախտման, քանի որ կապալառուն է պատասխանատվություն կրում այդ պահանջները չկատարելու համար,

գ/ պարտավոր է օգտագործել միայն պատվիրատուի տրամադրած նյութերը և սարքավորումները, եթե անգամ դրանք կարող են հանգեցնել կողմերի համար պարտադիր շրջակա միջավայրի պահպանության ու շինարարական աշխատանքների անվտանգության պահանջների խախտման, քանի որ պատվիրատուն է պատասխանատվություն կրում այդ պահանջները չկատարելու համար,

դ/ իրավունք չունի օգտագործել պատվիրատուի տրամադրած նյութերը և սարքավորումները, եթե դրանք կարող են հանգեցնել կողմերի համար պարտադիր շրջակա միջավայրի պահպանության ու շինարարական աշխատանքների անվտանգության պահանջների խախտման, սակայն պարտավոր է կատարել պատվիրատուի բոլոր ցուցումները, եթե անգամ դրանք կարող են հանգեցնել վերը նշված պահանջների խախտման:

15. Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝

ա/ կատարողին պատճառված վնասները լրիվ ծավալով հատուցելու պայմանով,

բ/ բոլոր դեպքերում և առանց որևէ նախապայմանի,

գ/ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով,

դ/ պատվիրատուն իրավունք չունի միակողմանի հրաժարվելու ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց:

16. Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրով տրամադրված ֆինանսավորման համար զիջման առարկա կարող է լինել՝

ա/ միայն այն դրամական պահանջը, որի վճարման ժամկետը վրա է հասել (ներկա պահանջ), սակայն պայմանով, որ առկա է վճարման կետանց,

բ/ միայն դրամական միջոցներ ստանալու՝ ապագայում ծագելիք իրավունքը (ապագա պահանջ),

գ/ ինչպես այն դրամական պահանջը, որի վճարման ժամկետը վրա է հասել (ներկա պահանջ), այնպես էլ դրամական միջոցներ ստանալու՝ ապագայում ծագելիք իրավունքը (ապագա պահանջ),

դ/ ինչպես այն դրամական պահանջը, որի վճարման ժամկետը վրա է հասել (ներկա պահանջ), այնպես էլ դրամական միջոցներ ստանալու՝ ապագայում ծագելիք իրավունքը, եթե ապացուցված է, որ պարտապանը թույլ է տալու կետանց:

17. Նշե՛լ լիարժեք պատասխանը: Ավանդներում դրամական միջոցներ ներգրավելու իրավունք չունեցող անձի կողմից քաղաքացուց ավանդ ընդունելու դեպքում՝

ա/ ավանդատուն կարող է պահանջել անհապաղ վերադարձնելու ավանդի գումարը, ինչպես նաև վճարելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված տոկոսները (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքներով) և տոկոսների գումարից բացի՝ հատուցելու ավանդատուին պատճառված վնասները,

բ/ բանկային ավանդի պայմանագիրը համարվում է անվավեր, նման պայմանագիրն առոչինչ է,

գ/ ավանդատուն կարող է պահանջել անհապաղ վերադարձնելու ավանդի գումարը և հատուցելու իրեն պատճառված վնասներն ամբողջ ծավալով,

դ/ բանկային ավանդի պայմանագիրը համարվում է չկնքված, իսկ ավանդատուն կարող է դիմել դատարան՝ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով:

18. Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ բանկային հաշվի պայմանագրով բանկը՝

ա/ կարող է հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործել՝ երաշխավորելով հաճախորդի՝ այդ միջոցներն անխոչընդոտ տնօրինելու իրավունքը,

բ/ չի կարող հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործել որևէ պարագայում,

գ/ կարող է հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործել՝ բացառապես հաճախորդի նախնական համաձայնությունը ստանալուց հետո,

դ/ չի կարող հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործել բացառությամբ պայմանագրով նախատեսված դեպքերի:

19. Անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ՝

ա/ վնասը ծագել է տուժողի դիտավորության կամ անզգուշության հետևանքով,

բ/ վնասի առաջացման մեջ բացակայել է իր մեղքը,

գ/ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ իր մեղքի բացակայության պայմաններում,

դ/ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

20. Ստորև թվարկվածներից ո՞րը գործատուի նախաձեռնությամբ աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմք չէ.

ա/ աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով),

բ/ պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքը,

գ/ հարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքը,

դ/ աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքը:

21. Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում արդյոք աշխատողն իրավունք ունի հետ վերցնելու աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը, և եթե՝ այո, ապա ինչ ժամկետում.

ա/ ոչ, աշխատողը ոչ մի պարագայում չի կարող հետ վերցնել աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը,

բ/ այո, աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ նշված ժամկետից հետո նա կարող է ծանուցումը հետ վերցնել միայն գործատուի համաձայնությամբ,

գ/ ոչ, աշխատողը կարող է ծանուցումը հետ վերցնել միայն գործատուի համաձայնությամբ՝ մինչև իրեն ազատելու մասին գործատուի կողմից անհատական իրավական ակտն ընդունելու պահը,

դ/ այո, աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան իրեն ազատելու մասին գործատուի կողմից անհատական իրավական ակտն ընդունելու պահը:

22. Վարչարարության հիմնարար սկզբունքներից է առավելագույնի սկզբունքը: Ստորև նշվածներից ո՞րն է համապատասխանում այդ սկզբունքի բովանդակությանը.

ա/ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր,

բ/ վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը,

գ/ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են,

դ/ վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

23. Եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը օրենքի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա՝

ա/ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը,

բ/ վարչական ակտը չի համարվում ընդունված,

գ/ վարչական ակտը համարվում է ընդունված, սակայն դիմողը պետք է դիմի վարչական մարմնին համապատասխան վարչական ակտն օրենքի ուժով իրեն տրամադրելու պահանջով,

դ/ վարչական ակտը չի համարվում ընդունված, սակայն դիմողը կարող է բողոքարկել վարչական մարմնի նշված անգործությունը:

24. Ներքոնշյալ սուբյեկտներից ո՞րը չի կարող հանդիսանալ «Մնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սնանկության վարույթի պարտապան.

ա/անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը,

բ/ ցանկացած ֆիզիկական անձ,

գ/ ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձը,

դ/ բանկը և վարկային կազմակերպությունը:

25. «Մնանկության մասին» ՀՀ օրենքը սահմանում է վճարային պարտավորությունն անվիճելի համարելու որոշակի հիմքեր: Նշվածներից ո՞րն է վճարային պարտավորությունը անվիճելի համարելու «Մնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերից մեկը.

ա/ պարտապանն առարկում է վճարային պարտավորության դեմ, սակայն վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և առկա է հաշվանցի հնարավորություն,

բ/ պարտապանն առարկում է վճարային պարտավորության դեմ, սակայն պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանն ապացուցում է, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ/ պարտապանը չի առարկում վճարային պարտավորության դեմ, կամ եթե առարկում է դրա դեմ՝ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

դ/ պարտապանը չի առարկում վճարային պարտավորության դեմ, կամ եթե առարկում է դրա դեմ՝ պահանջի չվիճարկվող մասը չի գերազանցում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:

Ընդամենը 50 միավոր

Խնդիր 1 /14 միավոր/

«Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ն 2012թ.-ից սկսած գործունեություն է իրականացնում ֆինանսական ծառայության ոլորտում, մասնավորապես՝ հաճախորդներին արժեթղթերի առք ու վաճառքի հետ կապված պրոֆեսիոնալ խորհրդատվություն տրամադրելով, ինչպես նաև Լոնդոնի Արժեթղթերի Շուկայում հաճախորդների անունից և նրանց հաշվին համապատասխան արժեթղթեր ձեռքբերելով և իրացնելով:

«Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի բաժնետերեր են հանդիսանում հետևյալ անձինք՝

- «Վենգուարդ Հոլդինգս» ՓԲԸ-ն՝ 68,13% բաժնեմասնակցությամբ,
- «Այթի Սոլյուշնս» ՍՊԸ-ն՝ 16% բաժնեմասնակցությամբ,
- «Ստեփանյան և Ընկերներ» ՓԲԸ-ն՝ 15,87% բաժնեմասնակցությամբ:

2022թ. հոկտեմբերի 11-ին տեղի է ունենում հանդիպում «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի և «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ի տնօրենների խորհրդի անդամների, գործադիր տնօրենների միջև, որի շրջանակներում մտքեր են փոխանակվում «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ին պատկանող Ջովունի համայնքում գտնվող հողամասի և դրա վրա գտնվող անշարժ գույքի (այսուհետ նաև՝ «Անշարժ Գույք») ձեռքբերման կապակցությամբ: Երկարատև բանակցություններից հետո կողմերը որոշում են կնքել Անշարժ Գույքի առուվաճառքի պայմանագիր՝ պայմանագրային գին սահմանելով 750.000.000 ՀՀ դրամը:

Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործարքի ֆինանսավորման նպատակով անհրաժեշտ միջոցներ առկա չեն, Կողմերը որոշում են գործարքի կնքման փուլում ներգրավել «ՖինԲանկ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ «Բանկ»), որը հայտնում է իր պատրաստակամությունը գործարքի գնի ֆինանսավորման կապակցությամբ: Այնուհանդերձ, Բանկը իր կողմից տրամադրվելիք ֆինանսավորման համար սահմանում է որոշակի նախապայմաններ, որպիսիք են՝

- Վարկի մայր գումարի չափ՝ 750.000.000 ՀՀ դրամը, որը տրամադրվում է համապատասխան վարկային պայմանագրի կնքման պահից 2 աշխատանքային օրերի ընթացքում:
- Վարկային պայմանագրի տոկոսադրույք՝ 37% տարեկան փաստացի տոկոսադրույք:
- Վարկի մարման ժամանակացույց՝ 76 ամիս:
- Վարկի մայր գումարի և հաշվեգրված տոկոսների չվճարման դեպքում տույժ՝ 0,26%-ի չափով յուրաքանչյուր կետանցված օրերի համար:
- Վարկային պայմանագրի կնքման հետ միաժամանակ «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ին պատկանող բոլոր ակտիվների գրավադրում:

Նկատի ունենալով, որ Անշարժ Գույքի ձեռքբերման նպատակով անհրաժեշտ է որոշակի ընթացակարգերի պահպանում՝ «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ն և «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ն «ՖինԲանկ» ՓԲԸ-ի հետ կնքում են մտադրությունների մասին արձանագրություն: Արձանագրության հետ միաժամանակ, կողմերը փոխանակվում են համապատասխան կորպորատիվ և հաշվապահական փաստաթղթերով, այն է՝ «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի և «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ի կանոնադրությունները, վերջին երեք տարիների ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև բալանսները/հաշվապահական հաշվեկշիռները:

Համապատասխան գործարքի կնքման նպատակով «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի տնօրենների խորհուրդը նախապատրաստում է համապատասխան ծանուցումներ իր բաժնետերերին, որում մասնավորապես նշվում է, որ. «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվում է «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ից ձեռքբերել Ջովունի համայնք, 16-րդ

փողոց հասցեում գտնվող հողամասը և դրա վրա գտնվող անշարժ գույքը՝ 750.000.000 ՀՀ դրամ արժեքով: Գործարքի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ներգրավել «ՏինԲանկ» ՓԲԸ-ին, որի հետ կնքված մտադրությունների մասին արձանագրությունը կցվում է սույն ծանուցմանը: Համապատասխան գործարքին հավանություն տալու նպատակով նախատեսվում է 2022 նոյեմբերի 1-ին գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ «Իսթեյթ Դիվելոփմենթ» ՍՊԸ-ի հետ պայմանագրի կնքմանը համաձայնություն տալու օրակարգով»: Մատնանշված ծանուցումները, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի կանոնադրությանը համապատասխան, ուղարկվում են բոլոր բաժնետերերին:

2022 նոյեմբերի 1-ին տեղի է ունենում «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովը, որին մասնակցում է միայն «Վենգուարդ Հոլդինգս» ՓԲԸ-ն, որը տալիս է իր «անվերապահ» համաձայնությունը «Իսթեյթ Դիվելոփմենթ» ՍՊԸ-ի հետ Անշարժ Գույքի ձեռքբերման պայմանագրի կնքման վերաբերյալ:

Մի քանի օր անց՝ 2022 նոյեմբերի 4-ին, «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենը «Իսթեյթ Դիվելոփմենթ» ՍՊԸ-ին և Բանկին է փոխանցում բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրության թղթային տարբերակը՝ հայտնելով, որ գործարքը կարող է կնքվել: Հաջորդ օրը՝ 2022թ. նոյեմբերի 5-ին «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենը «Իսթեյթ Դիվելոփմենթ» ՍՊԸ-ի հետ նոտարական վավերացմամբ կնքում է Անշարժ Գույքի առուվաճառքի պայմանագիրը, որից բխող իրավունքները գրանցվում է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից: Նույն օրը Կողմերը կնքում են նաև համապատասխան վարկային և գրավի պայմանագրեր (գրավադրվում է Անշարժ Գույքը, ինչպես նաև «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ին պատկանող և 200.000.000 ՀՀ դրամ արժեքով այլ ակտիվներ), որոնց համաձայն՝ պայմանագրի գինը՝ 750.000.000 ՀՀ դրամը Բանկը անմիջապես փոխանցում է «Իսթեյթ Դիվելոփմենթ» ՍՊԸ-ի հաշվեհամարին: Գրավի պայմանագիրը կնքվում է նոտարական վավերացմամբ, իսկ դրանից բխող իրավունքը ենթարկվում է պետական գրանցման: Գրավի պայմանագրով ամրագրվում է, որ այն ապահովում է Վարկային Պայմանագրով նախատեսված պարտավորությունների իրականացումը մինչև դրանում նախատեսված ժամկետը:

2022թ նոյեմբերի 22-ին «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի բաժնետերեր՝ «ԱյԹի Սոլյուշնս» ՍՊԸ-ն՝ «Ստեփանյան և Ընկերներ» ՓԲԸ-ն տեղեկանալով վերոգրյալ գործարքների կնքման մասին հայտնում են իրենց դժգոհությունը և հայց են ներկայացնում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: Իրենց պահանջի հիմքում բաժնետերերը դնում են հետևյալ փաստարկները.

- «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից խախտվել է խոշոր գործարքների կնքման վերաբերյալ կանոնները՝ ըստ վերջինիս կանոնադրության և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի:
- «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հավանություն է տրվել միայն Անշարժ Գույքի առուվաճառքի պայմանագրին, մինչդեռ քննարկման առարկա պետք է դարձվեր նաև Բանկի հետ կնքված վարկային և գրավի պայմանագրերը ևս:

Խնդրի լուծման տեսանկյունից ելակետային տվյալներ են հանդիսանում հետևյալ հանգամանքները՝

- 2022թ. նոյեմբերի 5-ի դրությամբ «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 1.000.000.000 ՀՀ դրամ:

- «Բլեքոռք Կապիտալ» ՓԲԸ-ի կանոնադրության համաձայն՝ «Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Հարց 1. Արդյո՞ք խախտվել են խոշոր գործարքների կնքմանը վերաբերող կարգավորումները՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և «Բլեքոռք Կապիտալ» ՓԲԸ-ի կանոնադրության պահանջների տեսանկյունից: Որո՞նք են խոշոր գործարքների անվավերության հիմքերը:

7 միավոր

Հարց 2. Արդյո՞ք Վարկային Պայմանագրի և Գրավի պայմանագրի պայմանները համապատասխանում են գործող օրենսդրական կարգավորումներին:

7 միավոր

Խնդիր 2. /12 միավոր/

Բեռնիկ Նազրվանյանը ֆինանսական խնդիրներով պայմանավորված 2009 թվականի փետրվար ամսին դիմում է իր հարևան Վարազդատ Կիրակոսյանին՝ խնդրելով իրեն տրամադրել գումար՝ իր ունեցած վարկային պարտավորությունները մարելու և նախաձեռնած ձեռնարկատիրական գործունեությունը շարունակելու նպատակով՝ խոստանալով իր ստացած շահույթից որոշակի մասը հանձնել Վարազդատին: Վարազդատ Կիրակոսյանը համաձայնվում է օգնել իր հարևանին և խոստանում է վերջինիս պարբերաբար պարտքով գումար տրամադրել՝ պայմանով, որ Բեռնիկ Նազրվանյանը մեկ տարի անց տրամադրված գումարը վերադաձնելուց բացի կվճարի նաև տոկոսներ՝ յուրաքանչյուր տարի 35% տոկոսադրույքով՝ մինչև փոխառության գումարի ամբողջական մարումը: Նշված պայմանավորվածությունից հետո 2009 թվականի մարտի 15-ին Վարազդատ Կիրակոսյանը Բեռնիկ Նազրվանյանին է տրամադրում 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից հետո նույն թվականի ապրիլի 15-ին՝ տրամադրում է ևս 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ նույն թվականի օգոստոսի 15-ին՝ տրամադրում է ևս 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Գումարը տրամադրելուց հետո Բեռնիկ Նազրվանյանը վերսկսում է իր ձեռնարկատիրական գործունեությունը, սակայն որևէ հաջողության չի հասնում և մեկ տարի անց այդպես էլ շահույթ չի ստանում:

Վարազդատ Կիրակոսյանը լրջորեն անհանգստանում է իր հարևանի ձախողմամբ և դիմում է վերջինիս՝ տրամադրված գումարն ամբողջությամբ վերադարձնելու ու հաշվարկված տոկոսները մեկ տարվա համար վճարելու պահանջով, ընդհանուր 40.500 ԱՄՆ դոլար: Բեռնիկ Նազրվանյանը, չունենալով պահանջված գումարը, հարևանին խնդրում է իրեն ևս մեկ տարի ժամանակ տրամադրել վճարումը կատարելու համար, սակայն Վարազդատ Կիրակոսյանը մերժում է այդ խնդրանքը: Ի պատասխան Բեռնիկ Նազրվանյանն առաջարկում է իր 50.000 ԱՄՆ դոլար արժողությամբ բնակելի տունը առուվաճառքի պայմանագրով ձևակերպել Վարազդատի անունով և իրեն տրամադրել լրացուցիչ ժամանակ: Ի վերջո 24.07.2010 թվականին Բեռնիկ Նազրվանյանի և Վարազդատ Կիրակոսյանի միջև կնքվում է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով Հակոբ Պարոնյան փողոցի թիվ 99 հասցեում գտնվող 89քմ մակերեսով բնակելի տունը և 0,01167հա մակերեսով հողամասը 50.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Բեռնիկ Նազրվանյանը վաճառում է Վարազդատ Կիրակոսյանին: Պայմանագրում Բեռնիկ

Նագրվանյանը նշում է կատարում այն մասին, որ նոտարական գրասենյակում Վարազդատ Կիրակոսյանն իրեն է փոխանցել պայմանագրի գինը: Պայմանագիրը ենթարկում են նոտարական վավերացման, իսկ դրանից բխող Վարազդատ Կիրակոսյանի սեփականության իրավունքը ենթարկվում է պետական գրանցման:

Պայմանագրի կնքումից հետո Վարազդատ Կիրակոսյանը շարունակում է Բեռնիկ Նագրվանյանից պահանջել վճարելու փոխառության գումարը, իսկ վաճառված բնակելի տանը շարունակում են բնակվել Բեռնիկ Նագրվանյանն ու վերջինիս ընտանիքի անդամները: Բեռնիկ Նագրվանյանը Վարազդատ Կիրակոսյանին վճարում է ընդհանուր առմամբ 8.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ վերջին վճարումը կատարում է 2015 թվականի նոյեմբերի 11-ին: Վարազդատ Կիրակոսյանը հարևանի ֆինանսական ծանր վիճակն ընկալելով շարունակում է ժամանակ տրամադրել մինչև վերջինս կվճարի իր պարտքը, սակայն մինչև 2022 թվականի փետրվարը սպասելուց հետո հասկանում է, որ հարևանն այլևս ի վիճակի չի կատարելու որևէ վճարում:

Ի վերջո Վարազդատ Կիրակոսյանը 2022 թվականի նոյեմբերի 4-ին հայց է ներկայացնում դատարան՝ ընդդեմ Բեռնիկ Նագրվանյանի և նրա ընտանիքի անդամների՝ պահանջելով վերջիններիս վտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տնից, իսկ հայցի հիքմում էլ դնում է այն, որ դեռևս 2010 թվականին վիճելի բնակելի տունը ձեռք է բերել Բեռնիկ Նագրվանյանից, սակայն փաստացի նախկին սեփականատերը տունը չի հանձնում իրեն, իսկ ինքը կարեկցանքից դրդված տարիներ շարունակ թույլ է տվել, որ պատասխանողն ու իր ընտանիքի անդամները բնակվեն այդ տանը:

Իր հերթին Բեռնիկ Նագրվանյանը 2022 թվականի նոյեմբերի 18-ին հակընդդեմ հայց է ներկայացնում դատարան՝ ընդդեմ Վարազդատ Կիրակոսյանի՝ պահանջելով կիրառել առջինը գործարքի անվավերության հետևանքներ, քանի որ իրականում կողմերը նկատի չեն ունեցել առուվաճառքի հարաբերությունները, և հենց դա է պատճառը, որ ինքը շարունակել է բնակվել իր տանը, իսկ իրենց միջև եղել են փոխառության հարաբերություններ, սակայն ինքը չի կարողացել ամբողջությամբ մարել պարտքը: Հետևաբար պայմանագիրն առջինը է և չի առաջացրել որևէ իրավական հետևանք, իսկ Վարազդատն էլ այսքան տարի անց է դիմել դատարան, քանի որ ինքը չի կարողանում վճարել պարտքի գումարը:

Վարազդատ Կիրակոսյանը ներկայացնում է հակընդդեմ հայցի պատասխան՝ նշելով, որ հակընդդեմ հայցի մասով գործի վարույթը պետք է առանձնացվի և կիրառվի հայցային վաղեմություն, քանի որ Բեռնիկ Նագրվանյանը բաց է թողել հայցային վաղեմության ընդհանուր եռամյա ժամկետը, պայմանագիրը կնքվել է 2010 թվականին, մինչդեռ հակընդդեմ հայցը դատարան է ներկայացվել շուրջ 12 տարի անց:

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև ծագած իրավահարաբերության բնույթը: Ի՞նչ կարգով պետք է կնքվի փոխառության պայմանագիրը (պայմանագրի ձևը, պայմանները, տոկոսների չափը): Արդյո՞ք վավեր է կողմերի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, հիմնավորեք պատասխանը:

6 միավոր

Հարց 2. Ու՞մ հայցն է ենթակա բավարարման և ինչու՞: Արդյո՞ք կողմերի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի նկատմամբ դատարանը կկիրառի առաջնություն հետևանքներ:

6 միավոր

Խնդիր 3. /14 միավոր/

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ տարածք վարձակալելու նպատակով «Դիջիթըլ Ասսեթ» ՓԲԸ-ն բանակցություններ է սկսում «Իզի Սփեյս» ՍՊԸ-ի հետ: Բանակցությունների արդյունքում ձեռք է բերվում նախնական պայմանավորվածություն ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի թիվ 15 հասցեում գտնվող բիզնես կենտրոնի երրորդ հարկում առկա գրասենյակային տարածքը (այսուհետ նաև՝ «Տարածք») վարձակալության հանձնելու վերաբերյալ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Տարածքը նախատեսված և պիտանի չէ որպես գրասենյակ օգտագործելու համար՝ Կողմերը ձեռք են բերում հետևյալ պայմանավորվածությունները.

- Նախքան Տարածքը վարձակալությամբ հանձնելը «Իզի Սփեյս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ «Վարձատու») պարտավորվում է ապահովել Տարածքի բարեկարգ վիճակը և տնտեսական գործունեության համար անհրաժեշտ նախապայմանները, մասնավորապես՝ գործարար հեղինակությանը նպաստող պայմանները՝ ապահովելով դրա կապիտալ և ընթացիկ վերանորոգումը՝ ըստ «Դիջիթըլ Ասսեթ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ «Վարձակալ») կողմից նախապես տրված դիզայնի:
- Տարածքի հանձնումը պետք է իրականացվի մինչև 2022թ. հուլիսի 3-ը:
- Տարածքը պետք է ունենա պատշաճ շերտավարագույրներ և շրիշակներ, իսկ Տարածքի հատակը պետք է լինի սալիկապատված:
- Տարածքը պետք է ապահովված լինի օդափոխության, ջրամատակարարման, գազամատակարարման, ջեռուցման և սառեցման համակարգերով, ինչպես նաև 24-ժամյա ինտերնետ ու ամենօրյա մաքրման ծառայություններով:
- Տարածքում լարանցումները պետք է հնարավորինս լինեն անտեսանելի և այդ հարցում համապատասխան լուծումների պատասխանատվությունը կրում է Վարձատուն:
- Վարձատուն պարտավորվում է տրամադրել առնվազն երկու ավտոկայանատեղի՝ ապահովելով դրանց հասանելիությունը՝ բացառելով այլ կողմնակի օբյեկտների, այլ ավտոմեքենաների կայանումը:

Մատնանշված պայմանավորվածությունների ձեռքբերումից հետո Վարձատուն ձեռնամուխ է լինում համապատասխան աշխատանքների իրականացմանը: 2020թ. հունվարի 3-ին կողմերի միջև տեղի է ունենում համապատասխան հանդիպում, ըստ որի՝ Վարձակալի ներկայացուցիչները ներկայանում են Տարածք՝ դրա հանձնում-ընդունումը իրականացնելու նպատակով: Հանդիպման արդյունքում Վարձակալի կողմից հայտնաբերվում են Տարածքի որոշակի թերություններ (մասնավորապես՝ մի քանի սենյակներում շերտավարագույրների բացակայություն, մի շարք հատվածներում շրիշակների բացակայություն կամ վնասվածքներ, գրասենյակի կենտրոնական հատվածում հաղորդակցության լարերը թաքցված չեն): Տարածքի հանձնում ընդունումն իրականացնելիս Վարձատուի ներկայացուցիչները հավաստիացնում են, որ այդպիսի թերությունները «իսպառ» վերացման ենթակա են և հայտնում պատրաստակամություն, որ այդպիսիք անվերապահորեն կվերացվեն: Նույն օրը կողմերի միջև կնքվում է Տարածքի վարձակալության պայմանագիրը (ամսական վարձավճարը՝ 3.000.000 ՀՀ դրամ), որից բխող իրավունքները ենթարկվում են պետական գրանցման: Վարձակալի պնդմամբ Պայմանագրում ավելացվում է հետևյալ դրույթը. *«Եթե Վարձատուն չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ապա Վարձակալն իրավունք ունի չկատարել Պայմանագրով սահմանված իր վճարային պարտավորությունները մինչև Վարձատուի կողմից պարտավորությունների խախտման*

վերացումը»։ Պայմանագրում ներառվում են նախապայմանագրային բանակցությունների ընթացքում կողմերի միջև համաձայնեցված կետերը ևս։

Պայմանագրի կնքումից հետո Վարձակալի կողմից 2020թ. հունվարից մինչև մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում, չնայած Վարձակալի կողմից ուղարկված ծանուցումների, Տարածքը աչքի է ընկնում հետևյալ թերություններով, մասնավորապես.

- Տարածքում շերտավարագույրների և շրիշակների բացակայություն, օդափոխության համակարգի հաճախակի խափանումներ,
- Վարձակալի մոտ առկա լուսանկարներով առկա են փաստեր, ըստ որի վերջինիս տիրապետմանը հանձնված ավտոկայանատեղիները լինում են արգելափակված այլ ավտոմեքենաներով կամ դրանք զբաղեցված են Վարձակալի հետ չկապված անձանց կողմից,
- Տարածքի հատակի և առաստաղի հատվածներում առկա են արտահոսքեր։

2020թ. մարտ ամսվա վերջին կորոնավիրուսային իրավիճակի սրացմամբ պայմանավորված ՀՀ-ում հայտարարվում է արտակարգ դրություն, ինչին, ի պատասխան, Վարձատուի կողմից Վարձակալին ուղարկված ծանուցմանը համապատասխան, բիզնես կենտրոնը անցնում է «արտակարգ ռեժիմի», որով սահմանափակվում է անձանց մուտքը, ինչպես նաև Տարածքի հետ կապված մաքրման ծառայությունների մատուցումը։

2020թ. մայիս ամսին վարձավճարի հերթական վճարումն իրականացնելիս Վարձակալը փոխանցում է փաստացի օգտագործված օրերի քանակի հաշվարկով վարձավճար, ինչն առաջացնում է Վարձատուի դժգոհությունը։ Վարձատուի ուղարկված ծանուցմանը, թե ինչու չի իրականացվել վարձակալված Տարածքի դիմաց վարձավճարի վճարումը այն պայմաններում, երբ Տարածքի օգտագործումն իրավաբանորեն վերապահվել է Վարձակալին, վերջինս պատասխանում է, որ ինքը պատրաստ չէ վճարում կատարել փաստացի չօգտագործված Տարածքի համար։

Վարձակալը իր կողմից ուղարկված նամակում հղում է կատարում նաև Տարածքի առկա թերություններին և մատնանշում, որ այդ օրվանից սկսած ինքը դադարեցնում է Վարձավճարի գծով վճարումների իրականացումը՝ մինչև Վարձատուի կողմից իր պարտավորությունների իրականացումը։

Վերոգրյալ նամակին ի պատասխան Վարձատուն հայցադիմում է ներկայացնում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով բռնագանձել վարձավճարի գումարը և դրա վրա հաշվեգրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները։

Վարձակալը ներկայացնում է հայցադիմումի պատասխան՝ իր փաստարկների հիմքում դնելով հետևյալ հանգամանքները.

- քովիդ համաճարակով պայմանավորված Վարձակալը օբյեկտիվորեն զրկվել է Տարածքի օգտագործման հնարավորությունից, հետևաբար առկա չէ չօգտագործված օրերի դիմաց վարձավճար վճարելու պարտականություն,
- նույնիսկ, եթե դատարանը գտնի, որ այդպիսի պնդումը անհիմն է, ապա վարձավճար չվճարելու հանգամանքը պայմանավորված է նաև Վարձատուի կողմից իր պայմանագրային պարտավորությունների չկատարմամբ, որը հնարավորություն է տալիս Վարձակալին վճարում չկատարելու։

Ի պատասխան վերոգրյալ պնդումների՝ Վարձատուն նշում է.

- Համաճարակի առկայությունը չի կարող պայմանագրի կողմին ազատել իր վճարային պարտավորություններից, քանի որ Տարածքը փաստացիորեն վերապահվել է Վարձակալի օգտագործմանը,
- Տարածքի թերությունները վերջինիս հանձնելու պահին արդեն իսկ հայտնի են եղել Վարձակալին, ուստի դրանք չեն կարող վկայակոչվել հետագայում և

Պայմանագրով սահմանված վարձավճարի վճարման պարտականությունները չկատարելու առիթ հանդիսանալ:

Հարց 1: Վերլուծել կողմերի միջև ծագած հարաբերության բնույթը: Արդյո՞ք համաձայնակի առկայությունը կամ վարձատուի կողմից իր պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը հիմք է վարձակալի կողմից իր վարձավճարի վճարման պարտավորության կասեցման համար: Արդյո՞ք Պայմանագրի կնքումից առաջ Տարածքի թերություններով ընդունելը գրկում է Վարձակալին դրանք հետագայում վկայակոչելու հնարավորությունից:

7 միավոր

Հարց 2: Ինչպի՞սի վճիռ կկայացվի դատարանի կողմից: Վերլուծել վարձավճարի վճարման պարտավորության կասեցման վերաբերյալ Պայմանագրի համապատասխան դրույթը՝ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պայմանագրերի մեկնաբանության կանոնների: Արդյո՞ք Պայմանագրի կնքումից հետո ծագած թերությունների (Վարձատուի կողմից պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ իրականացումը) առկայության պայմաններում վարձակալը կարող է չվճարել վարձավճարը:

7 միավոր

Խնդիր 4. /10 միավոր/

2018 թվականի մայիսի 10-ին Ա. Իշխանյանը (այսուհետ՝ նաև Աշխատող) և «Սեյֆ Քորպորեյշն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Գործատու) կնքել են անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիր (այսուհետ՝ Աշխատանքային պայմանագիր), որով Աշխատողը ստանձնել է «Փորձագետի» հաստիք: Աշխատողի աշխատանքային պարտականությունն է կազմել նաև փորձաքննության ենթարկել Գործատուի բոլոր նախագծերը, ֆինանսական փաստաթղթերը, ներքին և անհատական իրավական ակտերը:

2019 թվականի սեպտեմբերի 25-ին Գործատուն պետք է իրականացներ ընկերության գործունեության հետ կապված կարևոր փաստաթղթաշրջանառության հերթական գնահատում, սակայն նախապես ստանալով Աշխատողի մասնագիտական եզրակացությունը: Այդ նպատակով Գործատուն նախապես՝ երկու շաբաթ առաջ, Աշխատողին տեղեկացրել էր, որ անհրաժեշտ է մինչև նշված օրը ներկայացնել համապատասխան եզրակացություն, որից հետո Գործատուն կիրականացնի հերթական գնահատումը:

Աշխատողը բարեխղճորեն նախապատրաստել էր իր մասնագիտական եզրակացությունը, և 2019 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ վերջինիս եզրակացությունն արդեն իսկ պատրաստ էր: Նույն թվականի սեպտեմբերի 20-ին հերթական օրն աշխատանքի շտապելիս Աշխատողը ենթարկվում է վրաերթի, ինչի արդյունքում կորցնում է գիտակցությունն ու հայտնվում բժշկական հաստատությունում: Այդ օրն Աշխատողն ընդհանրապես աշխատանքի չի ներկայանում և չի կարողանում Գործատուին տեղեկացնել վրաերթի ու իր եզրակացության՝ արդեն իսկ պատրաստ լինելու մասին: Հաջորդող երկու օրերը լինում են ոչ աշխատանքային օրեր և Աշխատողը, գիտակցության գալով, չի կարողանում կապվել Գործատուի հետ: Աշխատողը Գործատուին զանգահարում է 2019 թվականի սեպտեմբերի 23-ին՝ փորձելով տեղեկացնել իր չներկայանալու պատճառների մասին և հայտնել իր կազմած եզրակացության

առկայության ու այն Գործատուին հանձնելու իր պատրաստակամության մասին, եթե Գործատուն իր աշխատողներից որևէ մեկին ուղարկի Աշխատողի մոտ բժշկական հաստատություն: Աշխատողի զանգին ի պատասխան Գործատուի աշխատակիցներից մեկը պատասխանում է, որ Գործատուն արդեն իսկ այլ եզրակացություն է ձեռք բերել, այլևս Աշխատողի եզրակացության կարիքը չկա, իսկ Աշխատողի անբարեխիղճ վերաբերմունքն էլ ստացել է «արժանի գնահատական»:

Աշխատողը, բժշկական հաստատությունից դուրս գրվելով 2019 թվականի սեպտեմբերի 27-ին, միանգամից շտապում է ներկայանալ աշխատանքի, սակայն վերջինիս թույլ չեն տալիս մուտք գործել իր աշխատավար, այլ հանձնում են կարգապահական տույժ կիրառելու և Աշխատանքային Պայմանագիրը լուծելու մասին հրամանը՝ հայտնելով, որ ինքն այլևս ընկերությունում չի աշխատում:

Հրամանը Գործատուն արձակել էր 2019 թվականի սեպտեմբերի 23-ի ամսաթվով՝ ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, այն է՝ անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելը և նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, որը սահմանում է նշված հիմքով կարգապահական տույժ կիրառելու գործատուի իրավունքը:

Աշխատողը, Գործատուի գործողությունները համարելով ոչ իրավաչափ, 2019 թվականի հոկտեմբերի 14-ին հայց է ներկայացնում դատարան՝ Գործատուի 2019 թվականի սեպտեմբերի 23-ի հրամանն անվավեր ճանաչելու և իրեն նախկին աշխատանքում վերականգնելու մասին պահանջներով:

Հարց 1. Արդյո՞ք պահպանվել են աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական կարգավորումները:

5 միավոր

Հարց 2. Արդյո՞ք Գործատուն իրավունք ուներ լուծելու Աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը քննարկվող իրավիճակում: Ներկայացրե՞ք համապատասխան հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման պայմաններն ու կարգը:

5 միավոր